9852

655
Р-64

1896

655
Ю-64

# ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## 1895 ԹՈՒԻ

## ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

*XVI-երորդ տարեշրջան*

С.С.Р.А Публичная Библиотека 7/XI 1922 имени А. Мясникяна
370

ԹԻՖԼԻՍ
Տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի, Օրբ. փողոց տ. № 1—2.
1896.

173/7

Дозволено цензурою. Тифлисъ, 5-го марта 1896 года.

655
Բ-64
Կգ.

370
2291-ՏՆ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ § 31

Տարեկան ընդհանուր ժողովում՝

Ա. Վարչութեան քարտուղարը ներկայացնում է ընդհանուր հաշիւ ընկերութեան լրացած տարուայ աշխատութեանց կայքի և դրութեան մասին.

Բ. Ընտրւում են պաշտօնատար անձինք.

Գ. Հաստատւում է Վարչութեան ծախուց նախահաշիւը և

Դ. Ընտրւում են պատւոյ անդամներ։

---

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—Ընկերութեան կազմութիւնը։ —I Վարչութեան գործունէութիւնը. գրքերի վաճառումը. գաւառ ուղարկուած գրքերի ցուցակը. դիւանի գործունէութիւնը. պաշտօնական հաշուետուութիւնը. Ընկերութեան տասնեւվեց տարուայ գործունէութեան համառօտ հաշիւը. —1896 թուի դրամական հաշիւը։ II—Խմբագրական Մասնաժողովի գործունէութիւնը. ընդունուած աշխատութիւնների եւ տպագրութեան համար նշանակուած գրքերի ցուցակը. —Ընկերութեան հրատարակութիւնների եւ վաճառուած ու պահեստում գտնուող գրքերի ցուցակը։ —Ընկերութեան անդամների մանրամասն ցուցակը։ —Նախահաշիւ 1896 թուի համար։—

---

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Մինչև 1895 թ. ապրիլի 30-ի ընդհանուր ժողովը՝ Վարչութիւնը և Խմբագրական Մասնաժողովը գործում էին հին կազմութեամբ։ Այդ ընդհանուր ժողովից յետոյ, նոցա կազմութիւնը հետևեալն էր.

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| *Նախագահ* | Քալանթար Ալէքսանդր |
| *Փոխ-նախագահ* | Ալիբէգեան Պետրոս |
| *Վարչութեան անդամներ* | Իշխ. Թումանեան Մարիամ<br>Խաչատրեան Խաչատուր |
| *Գանձապահ* | Տէր-Գրիգորեան Արշակ |
| *Գրագիր* | Խանդամիրեան Գրիգոր |
| *Քարտուղար* | Ամիրխանեան Յովսէփ |

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

*Անդամներ*:
- Առաքելեան Համբարձում
- Բալաղեան Սամուէլ
- Բարխուդարեան Արշակ
- Գիւլնազարեան Յովհաննէս
- Լունկեվիչ Վալերեան
- Միրզոյեան Գաբրիէլ
- Քոչարեան Յակովբ

*Ծանօթ. Ամառուայ ընթացքում Խմբագրական Մասնաժողովի անդամներից պակասել են երկուսը՝ պ. պ. Յ. Գիւլնազարեան՝ քաղաքից հեռանալու պատճառով և Գ. Միրզոյեան՝ հրաժարուելով անդամութիւնից։ Մասնաժողովը շարունակում էր իւր գործը մնացած հինգ անդամներով.*

1895 թուին Ընկերութիւնն ունէր 442 անդամ, որոնցից 22 մշտական և 420 իսկական. բացի դրանից Ընկերութիւնն ունէր աշխատակից անդամներ։ Հաշուետարուայ ընթացքում ա-



-ւելացել են 9 մշտական անդամ։ Ըստ բնակութեան տեղի Ընկերութեան իսկական անդամները հետևեալ թուերն են ներկայացնում.

| | 1894 թ. | 1895 թ. | | 1894 թ. | 1895 թ. |
|---|---|---|---|---|---|
| Թիֆլիս | 116 | 123 | Թէոդոսիա | — | 2 |
| Ագուլիս | 5 | 1 | Ժրնև | — | 1 |
| Ագա | 1 | — | Լագոդախ | 6 | — |
| Ախալցխա | — | 7 | Խան-քէնդի | 1 | 1 |
| Ախալքալաք | 1 | 10 | Խարկով | 1 | — |
| Ալէքսանդրիա | 4 | — | Կաղզուան | 2 | 1 |
| Ալէքսանդրոպօլ | 2 | 2 | Կարս | 3 | 8 |
| Աղստաֆա | 7 | 5 | Կօկանդ | — | 2 |
| Արդուին | 1 | — | Հաշտարխան | — | 2 |
| Արմավիր | — | 10 | Հաջամէթ | 2 | 4 |
| Արմեանսկիյ-Բազար | — | 6 | Հառիճոյ վանք | — | 1 |
| Բագու | 38 | 59 | Հին-Ղրիմ | 1 | 1 |
| Բաթում | 7 | 4 | Հին-Նախիջևան | 4 | — |
| Բէլգրադ | 1 | 1 | Ղազախ | 1 | 2 |
| Գանձակ | — | 2 | Ղզլար | 25 | 31 |
| Գեչրլու | — | 5 | Մեղրի | 5 | 1 |
| Գզնութ | — | 2 | Մերվ | 1 | — |
| Գիւքկում | 3 | — | Մոզդոկ | 1 | — |
| Գօրիս | 2 | 9 | Մօզդօկ | — | 1 |
| Դերբենդ | 1 | 9 | Մօսկվա | 10 | 14 |
| Դիլիջան | 10 | — | Նիժնիյ-Նօվգօրօդ | — | 1 |
| Դուշէթ | 1 | — | Նոր-Բայազէթ | 2 | 1 |
| Եկատերինօդար | — | 23 | Նուխի | 2 | — |
| Երևան | 24 | 14 | Նօվայա-Ալէքս. | — | 1 |
| Եւլախ | 2 | — | Նօվօրօսսիյսկ | — | 4 |
| Եւպատորիա | 1 | — | Շամախի | 1 | 4 |
| Զաքաթալա | 1 | — | Շխմահմուդ | — | 1 |
| Էջմիածին | 3 | — | Շուլավէր | 2 | — |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Շուշի . . . . | 21 | 24 | Վարշաւա . . | 6 | 2 |
| Պեխ . . . . | 1 | — | Վարցեխ . . . | 1 | — |
| Պետերբուրգ . . | 1 | 2 | Վլադիկավկազ . | — | 1 |
| Սղնախ . . . | 4 | — | Ցարսկիե-Սօլօդցի | 2 | — |
| Սուխում . . . | 3 | — | Ցղնա . . . . . | — | 3 |
| Ստաւրօպօլ . . | 4 | — | Քութայիս . . | 2 | 2 |
| Վաղարշապատ . | 5 | 2 | Օդեսսա . . . | 1 | 8 |
| | | | | 352 | 420 |

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

### ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Վարչութիւնը 1895 թ. ընթացքում ունեցել է 45 վարչական նիստ և երկու խառն ժողով: Խառն ժողովի զբաղմունքների առարկաները եղել են այնպիսի խնդիրներ, որոնց մասին կարևոր էր համաձայնութիւն կայացնել Խմբագրական Մասնաժողովի հետ: Վարչութեան անդամների բացակայութիւնը նիստերից արտայայտւում է հետևեալ թուերով. Խ. Խաչատրեան 17 անգամ, Պ. Ալիբէգեան 15 անգամ, բժ. Յ. Լօրիս-Մէլիքեան 13 անգամ, Գր. Խանդամիրեան 7, իշխ. Մ. Թումանեան 6, Ս. Յարութիւնեան 5, Յ. Ամիրխանեան 4, Արշ. Տէր Գրիգորեան 3, Գ. Ճահուկեան 1:

Այս ցուցակում բժ. Լօրիս-Մէլիքեանը, Ս. Յարութիւնեանը և Գ. Ճահուկեանը հին կազմութիւնից են և գործել են մինչև ապրիլի 30-ը: Բացակայութեան պատճառը մեծ մասամբ եղել է քաղաքից հեռանալը:

Վարչութեան գործունէութիւնը 1895 թ. ընթացքում կենտրոնացած է եղել հետևեալ կէտերի վերայ:

1. Գրքերի հրատարակութեան,



2. Ընկերութեան դրամական դրութիւնը բարձրացնելու,
3. Ներքին վարչական գործերի վերայ:

1. Գրքերի հրատարակութիւնը. 1895 թ. Ընկերութիւնը հրատարակել է 17 գիրք և մէկ մանկական լօտօ: Գրքերի անունները հետևեալներն են.

1. *Քննական պատմ. Հայոց մ. Գ.* } Ա. Մ. Գարագաշ.
2. *Նոյն, մ. Դ.* }
3. *Պատմ. Հայոց, բ. տպ.*, Ս. Պալասանեանի
4. *Հնութիւնք Ակնայ*, Ճանիկեանի
5. *Ուրբինօեցի մանուկը*, Ուիդաի
6. *Կօշկակարը երաժիշտ*, Տիւտչևի
7. *Խնձորենիների երկրում*, Ուիդաի
8. *Երկու եղբայր*, Մօնգօմերիի
9. *Մեծապատիւ մուրացկ.*, բ. տպ., Յ. Պարոնեանի
10. *Նախագիտելիք բուսաբանութեան*, Ա. Քիշմիշեանի
11. *Հազարից մէկը*, Ն. Մամիկոնեանի
12. *Ինչպէս կ'ուզէք*, Շէկսպիրի, թարգմ. Յ. Խ. Մասեհ.
13. *Դպրոցական առողջապահութիւն*, բժ. Վ. Արծրունու
14. *Կեղեքիչ*, Նեմիրովիչ-Դանչենկօի
15. *Գոռոզ արմաւենին*, }
16, *Գոռոզ Ազգեն*, } Վ. Գարշինի.
17. *Ճանապարհորդ գորտ*, }
18. *Մանկական լօտօ*

Ընդամենը 18 հրատարակութիւն, 23025 օրինակ, արժողութեամբ 14,815 ր. 59 կ.

Վարչութեան որոշման համաձայն №103 հրատարակութիւնը—Մանկական լօտօ—պիտի տպագրուէր 1200 օրինակ. տեղեկագրիս ցուցակում այդ հրատարակութիւնից նշանակուած է 400 օրինակ, որովհետև մինչև 1-ն յունուարի 1896 թ. այդ քանակութիւնն է միայն ստացուել վիմագրատնից, մնացած 800-ը անցնում է 1896 թուի հաշուին:

Վարչութիւնը՝ ցանկանալով հրատարակել մի քանի մանկական գրքեր շքեղ պատկերներով, Խմբագրական Մասնաժողովի համաձայնութեամբ, բանակցութիւնների մէջ է մտել արտասահմանեան և մայրաքաղաքի ֆիրմաների հետ։ Նոյն նպատակով Վարչութիւնը արդէն լոյս ընծայեց «Մանկական լօտօ» երեխաների համար։

Վարչութիւնը և Խ. Մասնաժողովն առանձին, խորհրդակցութեան և հոգացողութեան առնելով գրքերի սրբագրութեան խնդիրը, Խառն ժողովում ընդհանուր համաձայնութեամբ որոշեցին ունենալ մի պատասխանատու մշտական սրբագրիչ՝ միօրինակ ուղղագրութիւն պահպանելու համար։

II. Ընկերութեան գրամական վիճակը բարձրացնելու նպատակով՝ Վարչութիւնը աշխատել է նախորդ տարիների օրինակով աւելացնել անդամների թիւը, ընդարձակել գրքերի վաճառումը և գտնել պատահական ու կողմնակի դրամական աղբիւրներ։

Ընկերութեան աշխատակից անդամները, որոնց թիւը հասնում է մինչև 46-ի, իրանց գործունէութեամբ արդարացրին Վարչութեան յոյսերը և արժանի են ամենայն խրախուսանքի։ Դոցա շնորհիւ մասամբ գաւառական անդամների թիւը հասաւ 297-ի և զարգացաւ գրքերի տարածելու գործը։ Մինչև վերջին 3-4 տարիները ընկերութեան գրքերը վաճառւում էին համարեա բացառապէս Կենտրոնական գրավաճառանոցում, որտեղ շատ անգամ տարւում էին ամբողջ հրատարակութիւնները ուղղակի տպարանից։ Այս կամ այն տեղից չէին դիմում Վարչութեանը և խնդրում գրքեր։ Աշխատակից անդամներ հաստատելով՝ Վարչութիւնը զարկ տուեց գրքերի տարածման և ընթերցանութեան գործին։ Աշխատակից անդամները ամեն տեղ՝ նոյն իսկ գաւառի յետ ընկած անկիւններում՝ կարողացան տարածել ընկերութեան գրքերը։



*Այստեղ առաջ ենք բերում աշխատակից անդամների եւ գրավաճառների մօտ եղած գրքերի հաշիւը առ 1-ն յունուարի 1896 թ.*

| Տեղի անունը | Առ 1-ն յուն. 1896 թ. ինչ գումարի գիրք է ուղարկուած աշխ. անդամ. և գրավ. Ր. | Կ. | 1895 թ. ընթացքում ստացուած է դրամով, զեղ., գրք. և աշխատ. անդամ. բաժան. են անդամ. գրքեր։ Ր. | Կ. | Առ 1-ն յուն. 1896 թ. մնում է աշ. անդամ. և գրավ. մօտ գրքեր։ Ր. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| Ագուլիս . . . . | 223 | 48 | — | — | 223 | 48 |
| Ալէքսանդրոպօլ. . | 335 | 05 | 35 | 95 | 299 | 10 |
| Ախալցխա . . . | 55 | 26 | 1 | — | 54 | 26 |
| Ախալքալաք . . | 66 | 20 | 25 | — | 41 | 20 |
| Աղստաֆա . . . | 18 | — | 3 | — | 15 | — |
| Արմաւիր . . . | 19 | — | — | — | 19 | — |
| Արմեանսկիյ-Բազար | 30 | — | 30 | — | — | — |
| Բագու . . . . | 1434 | 65 | 489 | 51 | 945 | 14 |
| » Սև-Քաղաք | 206 | 10 | 85 | — | 121 | 10 |
| Բաթում . . . | 260 | 70 | 46 | 75 | 213 | 95 |
| Գանձակ . . . | 170 | 65 | 121 | 13 | 49 | 52 |
| Գեչրլու . . . | 99 | 45 | — | — | 99 | 45 |
| Գօրիս . . . . | 174 | 35 | — | — | 174 | 35 |
| Դերբենդ . . . | 96 | 92 | 26 | 85 | 70 | 07 |
| Դիլիջան . . . | 78 | 25 | — | — | 78 | 25 |
| Դուշէթ . . . | 12 | — | — | — | 12 | — |
| Եկատերինօդար . | 47 | 15 | — | — | 47 | 15 |
| Երևան . . . . | 354 | 15 | — | — | 354 | 15 |
| Եւլախ . . . . | 18 | — | — | — | 18 | — |
| Էջմիածին . . . | 186 | 80 | 8 | — | 178 | 80 |
| Թաւրիզ . . . | 233 | 14 | — | — | 233 | 14 |
| Թելաւ . . . . | 25 | — | — | — | 25 | — |
| Թէհրան . . . | 30 | 60 | — | — | 30 | 60 |
| Թէոդոսիա . . . | 23 | 65 | 4 | 10 | 19 | 55 |
| Թիֆլիս . . . | 3718 | 76 | 1249 | 93 | 2468 | 83 |
| Կ. Պօլիս . . . | 317 | 85 | 62 | 50 | 255 | 35 |
| Հին-Նախիջևան . | 171 | 70 | 25 | — | 146 | 70 |

| | ր. | կ. | ր. | կ. | ր. | կ. |
|---|---|---|---|---|---|---|
| Ղազախ . . . . | 17 | 20 | — | — | 17 | 20 |
| Ղարասու-Բազար . | 16 | — | — | — | 16 | — |
| Ղարս . . . . | 87 | — | 45 | 12 | 41 | 88 |
| Ղզլար . . . . | 294 | 90 | 29 | 95 | 264 | 95 |
| Մելիտոպօլ . . . | 15 | — | — | — | 15 | — |
| Մօզդօկ . . . | 23 | 60 | 12 | — | 11 | 60 |
| Մօսկվա . . . | 125 | 79 | 67 | 40 | 58 | 39 |
| Նոր-Բայազէթ . | 41 | 20 | — | — | 41 | 20 |
| Նոր-Նախիջևան . | 34 | 40 | — | — | 34 | 40 |
| Նուխի . . . . | 55 | 65 | 30 | 50 | 25 | 15 |
| Շամախի . . . | 46 | 74 | 4 | 05 | 42 | 69 |
| Շուշի . . . . | 631 | 80 | 159 | 18 | 472 | 62 |
| Պետերբուրգ. . . | 59 | 76 | 36 | 36 | 23 | 40 |
| Պետրովսկ . . . | 8 | 60 | — | — | 8 | 60 |
| Ռէշտ . . . . | 82 | 85 | 15 | 75 | 67 | 10 |
| Ռուսճուք . . . | 78 | 08 | 28 | 50 | 49 | 58 |
| Սամաղար . . . | 31 | 10 | — | — | 31 | 10 |
| Սիմֆերոպօլ . . | 15 | — | 15 | — | — | — |
| Սղնախ . . . . | 12 | — | 12 | — | — | — |
| Սուխում . . . | 71 | 84 | — | — | 71 | 84 |
| Սևանա-վանք . . | 1 | — | — | — | 1 | — |
| Վլադիկավկազ . . | 31 | 02 | — | — | 31 | 02 |
| Ցղնա . . . . | 62 | 25 | 22 | — | 40 | 25 |
| Օդեսսա . . . | 44 | 12 | 32 | 86 | 11 | 26 |
| | 10293 | 76 | 2724 | 39 | 7569 | 37 |

Պէտք է սակայն նկատել, որ աշխատակից անդամներից մի քանիսը չեն ուղարկել ժամանակին հաշիւները Վարչութեանը, որպէս զի կարելի լինէր հաշիւը աւելի ճիշտ կերպով ներկայացնել:

Կենտրոնական գրավաճառանոցից 1895 թ. ստացուեց 629 ր. 75 կ.

Բացի անդամավճարներից Վարչութիւնը ունեցաւ մուտք և հետևեալ աղբիւրներից.



1. Հանգուցեալ Պօղոս Մէլիք-Ղարագեօզեանի ժառանգները ի յիշատակ իրանց հօր նուիրեցին Ընկերութեանը 100 ր., որի համար Վարչութիւնը յայտնեց նոցա իւր շնորհակալութիւնը:

2. Նոյեմբերի 23-ին յօգուտ Ընկերութեան տրուեց հայերէն ներկայացում, «Բաղդասար աղբար», որից զուտ արդիւնք մնաց Ընկերութեանը 261 ր.

3. Դեկտեմբերի 9-ին Վարչութիւնը տուեց Թիֆլիսի ժողովարանում մի նուագահանդէս, որից զուտ արդիւնք ստացաւ 742 ր. 20 կ.

4. Պ. Շանշեանի անունով գումարը, որի պայմանամիջոցը լրացաւ այս տարի, անցաւ Ընկերութեանը, իբրև սեփականութիւն: Սակայն Վարչութիւնը իւր կողմից մտադիր է հրատարակել Շանշեանի կենսագրութիւնը, որի համար նա դիմել է Խմբագրական Մասնաժողովին առանձին գրութեամբ:

III. Անցնելով ներքին վարչական գործունէութեանը՝ պէտք է յայտնել, որ Վարչութիւնը նախորդ տարիների օրինակով ամսէ ամիս տալիս էր հաշիւ Ընկերութեան ելքի և մուտքի մասին Թիֆլիսի ոստիկանապետին: Նոյնպէս Վարչութիւնը անցեալ տարի տուեց ոստիկանապետին առանձին տարեկան հաշիւ 1894 թուի համար՝ յատուկ ուղարկած բլանկով: Միևնոյն ժամանակ 1894 թ. հաշիւը տրուեց նահանգապետին, համաձայն կանոնադրութեան 37 յօդուածի:

Մի քանի հիմնարկութիւններից Վարչութիւնը ստացել է խնդիրներ՝ նուիրելու նոցա ընկերութեան հրատարակութիւններից կամ մեծ զեղջ անելու: Վարչութիւնը մեծ մասամբ յարգել է այդ խնդիրները: Միևնոյն ժամանակ Վարչութիւնը շարունակել է ուղարկել և այն դպրոցներին ու գրադարաններին, որոնց մասին եղել են որոշումներ նախորդ տարիներում:

Վիէննայի Մխիթարեանների աբբահայր Այտնեան արքեպիսկոպոսի գրականական գործունէութեան յիսնամեակի առթիւ, Վարչութիւնը՝ Խմբագրական Մասնաժողովի հետ միասին որո-

շեցին՝ շնորհաւորել հեռագրով յոբելեարին եւ ստորագրել մի օրինակ ձեռագրների ժողովածուի, որ հրատարակւում է Վիէննայում ի պատիւ Հ. Այտնեանի։

Հոկտեմբերի 22-ին հայր Այտնեանին ուղարկուեց հետեւեալ հեռագիրը.

«Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը, բարձր գնահատելով Ձեր բազմաշխատ գրական գործունէութիւնը, հայ լեզուագիտութեան ասպարիզում կատարած Ձեր տաղանդաւոր հետազօտութիւնները եւ հրատարակչական ու տպագրական գործի մէջ մտցրած Ձեր բազմաթիւ բարեփոխութիւնները, ամենախորին յարգանքի ջերմ զգացմունքով շնորհաւորում է անխոնջ աշխատողիդ յիսնամեայ գործունէութեան յօբելեանը»

---

Տարուայ ընթացքում Վարչութիւնը կարեւոր համարեց տպագրել առանձին յայտարարութիւններ Ընկերութեան հրատարակած գրքերի մասին եւ տարածել գաւառներում բոլոր լրագիրների հետ։ Դորա համար խմբագրական Մասնաժողովը բաժանեց Ընկերութեան հրատարակութիւնները կատեգօրիաների՝ բովանդակութեան համեմատ։

1895 թ. Ընկերութեան գրասենեակը իւր հրատարակութիւնների փոխարէն ստացել է հետեւեալ պարբերական հրատարակութիւնները. «Մշակ», «Արձագանք», «Նոր-Դար», «Մուրճ», «Տարազ», «Աղբիւր», «Кавказъ», «Новое Обозрѣніе» «Тифлисскій Листокъ», և «Кавказское Сельское Хозяйство»: Դորա համար Վարչութիւնը յայտնում է իւր շնորհակալութիւնը։

Վարչութիւնը պարտք է համարում յայտնել իւր շնորհակալութիւնը այն բոլոր թէ աշխատակից անդամներին եւ թէ մասնաւոր անձանց, որոնք նպաստել են Ընկերութեան գործերի յաջողութեանը։

Այստեղ դնում ենք մի համեմատական աղիւսակ Ընկերութեան գործունէութեան մասին, սկսած նրա հիմնարկութիւնից մինչեւ 1895 թ. վերջը։



| | 1880 1885 | 1886 | 1887 | 1888 | 1889 | 1890 | 1891 | 1892 | 1893 | 1894 | 1895 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Անդամ. թիւը իսկ. եւ մշ. | 503 | 28 | 14 | 18 | 113 | 88 | 113 | 359 | 313 | 365 | 442 |
| Վարչութ. նիստերի թիւը. | 25 | 2 | — | 1 | 8 | 8 | 29 | 28 | 41 | 47 | 45 |
| Խմբ. Մասնաժ. նիս. թիւը. | 28 | — | — | — | 13 | 15 | 26 | 24 | 25 | 33 | 40 |
| Վարչ. եւ Խմ. Մաս. խառն նիստերի թիւը. | 44 | 7 | 7 | 3 | 5 | 14 | 1 | — | 2 | 1 | 2 |
| Ընդհանուր ժողով. թիւը. | 6 | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 1 |
| Հրատարակած գրք. թիւը. | 20 | 1 | 1[illegible] | 2 | 1 | 1 | 16 | 18 | 12 | 12 | 18 |
| ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ | | | | | | | | | | | |
| Մուտք. Մուտքի ամեն տեսակ յօդուածներով. | 12389,08 | 2007,33 | 206,73 | 907,25 | 1934,73 | 2906,57 | 2022,87 | 5473,88 | 5052,79 | 4907,80 | 6872,36 |
| Ծախք. Գրքերի հրատարակութեան, դիւանական եւ այլ ծախքեր . . . . . | 9802,33 | 1567, | 231,14 | 1257,10 | 1094,97 | 2736,08 | 3714,11 | 5998,45 | 5342,60 | 4083,87 | 8771,77 |

# ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

(1895 թ. յունուարի 1-ից—

## ՄՆԱՑՈՐԴ ԱՌ 1-ԻՆ ՅՈՆՎԱՐԻ 1895 Թ.

| | | ր. | կ. | ր. | կ. |
|---|---|---|---|---|---|
| 1 | Յատուկ գումար . . . | 65 | 20 | | |
| 2 | Մէկ խաղարկական տոմս II-րդ փոխառութեան № $8798/_{30}$ . | 228 | 56 | | |
| 3 | Պետական ազնուական կալուածակ. բանկի խաղար. մէկ տոմս №$1075/_{29}$ | 194 | 53 | | |
| 4 | Ընթացիկ հաշուով Թիֆ. Առևտր. բանկում . . . . . | 660 | 86 | | |
| 5 | Պատրաստի դրամ . . . | 1000 | 68 | 2149 | 83 |

## ՄՈՒՏՔ

| | | | ր. | կ. | ր. | կ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Անդամա-վճարներից | ա. 420 իսկակ. անդ. | 2520 | — | | |
| | | բ. 8 մշտական անդ. | 800 | — | 3320 | — |
| 2 | Գրքերի վաճառումից | ա. գրասենեակում | 498 | 83 | | |
| | | բ. գաւառներում | 1267 | 13 | | |
| | | գ. Կենտր. գրավաճ. | 629 | 75 | | |
| | | դ. Ընկերութ. նուիր. գր. | 3 | 67 | | |
| | | ե. Անդամ. տուած գրք. 5 ր. արժ. աւել. ստաց. | 6 | 04 | 2405 | 42 |
| 3 | Նուէրներից . . . | | — | — | 123 | 10 |
| 4 | Երեկոյթներից . . . | | — | — | 1003 | 20 |
| 5 | Տօկոսներ . . . . | | — | — | 20 | 64 |
| | Ընդհանուր գումարն է | | — | — | 9022 | 19 |

# ԴՐԱՄԱՐԿՂԸ

1896 թ. յունուարի 1-ը)

## ԵԼՔ

| | | | ր. | կ. | ր. | կ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գրքերի հրատարակութեան ծախք (7287 ր. 77 կ.) | ա. Տպարանի | 2424 | 85 | | |
| | | բ. Վարձատրութիւն հեղ. սրբ. և թարգ. | 2015 | 84 | | |
| | | գ. Թղթի (2847—8) | 970 | 18 | 5410 | 87 |
| 2 | Փոստի ծախք . . . . | | — | — | 550 | — |
| 3 | Գիւանական ծախքեր . . . | | — | — | 205 | 26 |
| 4 | Կահ կարասիք . . . . | | — | — | 32 | 74 |
| 5 | Տան վարձ . . . . . | | — | — | 300 | — |
| 6 | Ռոճիկներ . . . . . | | — | — | 396 | — |
| | | | | | 6894 | 87 |

(Մնում է վճարելու 1876 90)

| | | |
|---|---|---|
| Ընդամենը . . . . . | 8771 | 77 |

## ՄՆԱՑՈՐԴ ԱՌ 1-Ն ՅՈՒՆՈՒԱՐԻ 1896 Թ.

| | | ր. | կ. | ր. | կ. |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մէկ խաղարկական տոմս II-րդ փոխառութեան № $8798/_{30}$ . | 228 | 56 | — | — |
| 2 | Պետական ազնուակ. կալուած. բանկի խաղ. մէկ տոմս № $1075/_{29}$ | 194 | 53 | — | — |
| 3 | Ընթացիկ հաշուով Թիֆ. Առ. բանկ. | 511 | 14 | — | — |
| 4 | Պատրաստի դրամ . . . | 1193 | 09 | 2127 | 32 |
| | Ընդհանուր գումարն է | | | 9022 | 19 |

Ծանօթ. Յ 1-ն յունուարի 1896 թ. ցոյց տուած 2127 ր. 32 կ. մնացորդից պէտք էր վճարել 1895 թուին Դիտեատկովսկուն թղթի համար 1876 ր. 90 կ.։ Վարչութիւնը, չկամենալով ծախել խաղարկութեան տոմսերը, յետաձգեց այդ պարտքի վճարումը 1896 թուին, ուստի զուտ մնացորդ ց 1-ն յունուարի 1896 թ. պէտք է հաշուել 250 ր. 42 կ.

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.

1895 Թւի սկզբում Խմբագրական Մասնաժողովի անդամներն էին օր. Վ. Յակոբեան, պպ. Հ. Առաքելեան, Ա. Բարխուդարեան, Ս. Բալաղեան, Վ. Լունկևիչ, Ստ. Մալխասեան և Յ. Քոչարեան, ապրիլի 30-ի ընդհանուր ժողովից յետոյ նոր կազմութեամբ՝ Հ. Առաքելեան, Ս. Բալաղեան, Ա. Բարխուդարեանց, Յ. Գիւլնազարեանց, Վ. Լունկևիչ, Գ. Միրզոյեան և Յ. Քոչարեան։

---

Տարուայ ընթացքում Մասնաժողովը ունեցել է 40 նիստ, որոնցից մինչև ապրիլի 30-ը, այսինքն հին կազմութեամբ՝ եղել են 16 նիստ, և նոր կազմութեամբ 24 նիստ, այդ թւում մի արտակարգ նիստ։ Բացի դրանից Խմբագրական Մասնաժողովը վարչութեան հետ կայացրել է երկու խառն ժողով՝ մի քանի խնդիրների մասին խորհրդակցելու համար։ Աշնան սկզբում Մասնաժողովից հեռացել են երկու անդամ, պ. Յ. Գիւլնազարեան՝ Բագու տեղափոխուելու պատճառով և պ. Գ. Միրզոյեան՝ հրաժարուելով անդամութիւնից։

Նախագահի պաշտօնը վարել է պ. Ս. Բալաղեանը, իսկ քարտուղարի պաշտօնը պ. Յ. Քոչարեանը։

Տարուայ ընթացքում անդամների բացակայութիւնը նիստերից արտայայտուել է հետևեալ թւերով. պ. Առաքելեան 4 անգամ (քաղաքից բացակայելու պատճառով), պ. Միրզոյեան— 4 անգամ, պ. Լունկևիչ—3 անգամ (քաղաքից բացակայելու պատճառով), պ. Բալաղեան 1 անգամ, պ. Գիւլնազարեան 1

1004
152429



անգամ։ Ոչ մի անգամ չեն բացակայել պպ. Բարխուդարեան և Քոչարեան։ Տարուայ ընթացքում եղել է մի չըկայացած նիստ՝ անդամների կանոնաղրութեամբ պահանջուած թիւը չըլինելու պատճառով։ Նիստեր եղել են ամբողջ տարին բացի յուլիս և օգոստոս ամիսներից։

С.С.Р.А Публичная
7/XI 1922

---

1895 Թուի ընթացքում Խմբագրական Մասնաժողովը թէ քննել է այն գրուածքները և թարգմանութիւնները, որոնք Վարչութեան միջոցով ներկայացուած են իրեն և թէ ինքը իւր նախաձեռնութեամբ ընտրել է գրքոյկներ ժողովրդական և մանկական ընթերցանութեան համար։ Ընդամենը Մասնաժողովի անդամները տուել են 78 զեկուցում. բացի դրանից մի քանի զեկուցումների համար Մասնաժողովը դիմել է մասնաւոր ձեռնհաս անձանց, որոնք ամենայն պատրաստականութեամբ յայտնել են իրենց գրաւոր կարծիքները առաջարկած գրքերի մասին։ Այսպէս 1) բժ. Ա. Բաբայեանը տուեց զեկուցում բժ. Վ. Արծրունու «Գպրոցական առողջապահութեան» մասին. 2) Պ. Գաբր. Առաքելեանը կարծիք տուեց Յ.Մեղաւորեանի իրաւաբանական հետազօտութեան մասին. 3) պ. Ա. Քալանթարը յայտնեց իւր կարծիքը 1) «Կաթնատու և Կաթնագործութիւն» գրքի մասին և 2) Ա. Քիշմիշեանի «Պասագիրք Բուսաբանութեան» մասին։

---

Ահա ցուցակ այն գրուածքների, որոնք ներկայացուած են Վարչութեան միջոցով Խմբագրական Մասնաժողովի քննութեան։ Համաձայն 1895 Թ. ընդհանուր ժողովի որոշման այստեղ դընում ենք միայն գրուածքի վերնագիրը առանց հեղինակի կամ թարգմանչի անունը յիշելու։ Հեղինակի կամ թարգմանչի անունը կըդնենք միայն ընդունուած ձեռագրերի վերաբերմամբ։

1. Թուչող մտքեր.
2. Նիկ. Մամիկոնեան. Հազարից մէկը.

3. Բժ. Վ. Արծրունի. Դպրոցական առողջապահութիւն.
4. Մօնգօմերի. Նրան չը հասկացան. Թարգ. Պ.Պ.
5. Վիկտոր Հիւգօ, փոխադրութիւն.
6. Ձէկսպիր. Էդուարդ III.
7. Կռուածաղիկ.
8. Հոմերոս և իւր գրուածքները:
9. Աղիգէ կամ Չերքեզները, Պոտսօյից.
10. Dittes, Geschichte der Erziehung und Unterricht.
11. Իլիինսկի, Արաղը և ոգելից խմիչքները. Թարգմ. ռուսերէնից:
12. Ուիդա. Ռուբինօեցի մանուկը, Թարգ. Ղ. Ա.
13. Ախշարումով, Ճառատ. Թարգմ. ռուսերէնից.
14. Տիւտչեվ. Կօշկակարը երաժիշտ, Թարգմանութ. ռուսերէնից.
15. Կաթնտու և կաթնագործութիւն.
16. Ա. Քիշմիշեան. Դասագիրք բուսաբանութեան:
17. Ուիդա. Խնձորենիների երկրում. Թարգմ. Ղ. Ա.
18. Ձէկսպիր. Ինչպէս կուզէք. Թարգմ. Յովհաննէս խան Մասեհեան.
19. Հայրենագիտութիւն Վասպուրական գաւառի.
20. Тиссандье. Мученики науки.
21. Թօմաս Բօյլ. «Աստղերի աշխարհում», փոխադրութիւն.
22. Յ. Մեղաւորեան. Իրաւաբանական հետազօտութիւն հայկական ընտանիքի մասին, ֆրանսերէն.
23. Բիերնստերն-Բիերնսօն. «Նորապսակներ». Կատակերգութիւն 2 արարուածով, Թարգմ. ռուսերէնից:
24. Երգօլսկայա. «Գիւղում». Թարգմանութիւն ռուսերէնից:
25. Մի խորոմ խոտ, ժողովածու:
26. Հաօ կինը.
27. Ձէկսպիր. Փոթորիկ. Թարգմ. Յովհաննէս խան Մասեհեան.



28. Ճատօբրիան, «Վերջին Աբենսրաժի արկածները», Թարգմանութիւն ֆրանսերէնից.
29. Պետրոս Դուրեանի կենսագրութիւնը, Էքսերճեանի. և Պետրոս Դուրեանի գրուածքների երկու հրատարակութիւնները:
30. «Արդենի անտառի վէպը», յաւելուած Ձէկսպիրի «Ինչպէս կուզէք»-ին:
31. Պօնսօն դիւ Տերրայլի. Ռօկամբօլ.
32. Ռադա տատը, Թարգմանութիւն ռուսերէնից.
33. Ռուբակին. Զրոյցներ բնութեան մասին. Թարգմանութիւն ռուսերէնից.
34. Լօտօ, մանկական խաղ.
35. Իւրի Եակշիչ. Պառաւ Մարկօ. Թարգմանութիւն ռուսերէնից.
36. Գօգօլ. Ճինել, Թարգմ. ռուսերէնից.
37. Պրօֆ. Էյգամ. Տարրական առողջապահութիւն. Թարգմ. ռուսերէնից.
38. Արքայադուստր յաւերժահարս, Թարգմ. ռուսերէնից:
39. Սասուն, յօդուածներ Մուրճից.
40. Փառք Հայաստանի.
41. Ռաշմաճեան և Չիլինգարեան. Բնագիտական զրոյցներ:
42. Մուֆլու, Թարգմ. ռուսերէնից, Յ. Օհանեանի.
43. Սպարտակ, վէպ. Թարգմ. ռուսերէնից.
44. Առաջին յանցանքի հետևանքները, Թարգմ. ռուսերէնից:
45. Անհերևոյթ հողագործ, փոխադրութիւն ռուսերէնից. Լ. Մ. Աղ.
46. Եղբայրք Գրակքներ և նոցա կեանքը. Թարգ. ռուսերէնից.
47. Լօրդ Լիտտօն. Պօմպէյի վերջին օրերը. Թարգմ. անգլիերէնից:

Այս ցուցակից Մասնաժողովի կողմից ընդունուել են իբրև յարմար տպագրութեան համար հետևեալ գրքերը.

№№ 2. Հազարից մէկը. վէպ Նիկողայոս Մամիկոնեանի.
3. բժ. Վ. Արծրունի. Գպրոցական առողջապահութիւն.
4. Մօնգօմերի. Երկու եղբայր. Թարգ. Պ.Պ.
12. Ուիդա. Ուրբինօեցի մանուկը. Թարգմ. Ղ. Ա.
14. Տիւտչեվ. Կօշկակարը երաժիշտ, Թարգմ. ռուսերէնից.
16. Ա. Քիշմիշեան. Դասագիրք բուսաբանութեան.
17. Ուիդա. Խնձորենիների երկրում. Թարգմ. Ղ. Ա.
18. Ջէկսպիր. Ինչպէս կուզէք. Թարգմ. անգլիերէնից Յովհ. խան Մասեհեան.
22. Յ. Մեղաւորեան. Իրաւաբանական հետազօտութիւն հայկական ընտանիքի մասին.
33. Ռուբակին. Զրոյցներ բնութեան մասին.
34. Լօտօ. մանկական խաղ.
42. Մուֆլու. Թարգմ. ռուսերէնից Յ. Օհանեան.
45. Աներևոյթ հողագործ. փոխադրութիւն ռուսերէնից, Լ. Մ. Ա.

Ընդամենը տասն և երեք գիրք։

Հետևեալ գրքերի մասին դեռ վերջնական որոշում չէր կայացրած մինչև Յունվ. 1-ը 1896 Թուի.

№№ 26. Հռօ կինը.
27. Փոթորիկ, Ջէկսպիրի. Թարգմ. անգլիերէնից.
35. Իւրի Եակշիչ. Պառաւ Մարկօ. Թարգմ. ռուսերէնից։
41. Թաշմաճեան և Չիլինգարեան. Բնագիտական զրոյցներ.
43. Սպարտակ. Թարգմ. ռուսերէնից.
46. Եղբարք Գրակքներ և նոցա կեանքը. Թարգմ. ռուսերէնից.

Ընդամենը վեց գիրք։

Անյարմար են համարուած տպագրութեան համար հետևեալ գրքերը. №№ 1, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 13, 15, 19, 20, 21,



23, 24, 25, 28, 29, 30, 31, 32, 36, 37, 38, 39, 40, 44 և 47, ընդամենը 28 գիրք։

Վերոյիշեալ գրքերը Խմբագրական Մասնաժողովը ստացել է քննութեան համար Վարչութեան միջոցով։ Բայց նա գոհանով չէ բաւականացել և աշխատել է իւր սեփական նախաձեռնութեամբ ընտրել ըստ բովանդակութեան յարմարագոյն գրքեր և յանձնել Թարգմանելու զանազան ձեռնհաս անձանց։

Ի նկատ առնելով անցեալ ընդհանուր ժողովներում յայտնած ցանկութիւնը ժողովրդական ընթերցանութեան գրքոյկների վերաբերեալ՝ Խմբագրական Մասնաժողովը մի քանի նիստերում զբաղուեց ժողովրդական գրքերի ցուցակ կազմելով։ Այդ նպատակով Մասնաժողովը ծանօթացաւ հետևեալ գրքոյկների հետ (ռուսերէն).

1) Трудъ, богатство и деньги.
2) Месть, Гюи де Мопасана.—Сидѣлка, Франсуа Коппе.
3) Рыжій графъ, Засодимскаго.
4) Ночь подъ Рождество
5) Старый звонарь
6) Лѣсъ шумитъ } В. Короленко.
7) Дѣти подземелья
8) Невольный убійца
9) Аврамъ, Златовратскаго
10) Прохожій, Григоровича.
11) Человѣкъ за бортомъ, Станюковича.
12) Дѣлежъ, Мануеля.
13) Сухарь, Быстренина.
14) Живодеръ, Немировича—Данченко.
15) Искра Божія, Злотовратскаго.
16) Пріемышъ.
17) Горе, Чехова.
18) Мальчикъ—Геркулесъ, Сенкевича.

19) Аясларское дѣло.
20) Трусъ . . . . . . . . . . .
21) То, чего не было . . . . .
22) Гордая пальма. . . . . . . . В. Гаршина.
23) Сказанье о Гордомъ Аггеѣ.
24) Лягушка-путешественница. .

Բացի դրանցից Մասնաժողովը իւր անդամների նախաձեռնութեամբ քննել է և հետևեալ գրքոյկները.

25) Андерсенъ. Сказки: a) Снѣжная Королева; b) Калоши-счастье; c) Сундукъ-Самолетъ; d) Дикіе лебеди, e) Дѣвушка, наступившая на хлѣбъ; f) Что ни сдѣлаетъ старикъ, все хорошо; g) Она никуда не годилась.
26) Ջանթ. Երազ օրեր. «Մուրճ» ամսագիր.
27) Анненская. Товарищи, разсказъ.
28) Келльнеръ. Мысли о школьномъ и домашнемъ воспитаніи.

Այս գրքերից Խմբագրական Մասնաժողովը հաւանութիւն է տուել հետևեալներին. №№ 2, 4, 6, 7, 8, 11, 13, 14, 20, 22, 23, 24, 26, 27, ընդամենը 14 գիրք:

Անյարմար են համարուած ըստ բովանդակութեան հետևեալները. №№ 1, 3, 5, 9, 10, 12, 15, 16, 17. 18, 19, 21, 25, 28, ընդամենը 14 գիրք:

Յարմար ճանաչուած գրքոյկները մեծ մասամբ արդէն յանձնուած են թարգմանութեան. Թարգմանութիւնները ստացուած են, քննուած և մի քանիսը արդէն հրատարակուած: Ահա դրանք. № 2. Վրէժ.—Հիւանդապահ աղջիկը.
№ 7. Գետնափորի երեխաները.
№ 8. Ակամայ մարդասպան.
№ 14. Կեղեքիչ.
№ 22. } Գոռոզ արմաւենին. Գոռոզ Աղդէն:
№ 23. }



№ 24. Ճանապարհորդ գորտը.
№ 26. Գրքի մասին (Ջանթ. «Երազ օրեր») չայտնուած է Վարչութեանը հեղինակի հետ արտատպելու մասին բանակցելու համար:

Առանձին նշանակութիւն տալով շքեղ պատկերազարդ գրքոյկներին շատ փոքր երեխաների համար՝ Խմբագրական Մասնաժողովը ընտրեց 10 մանկական գրքոյկներ և խնդրեց Վարչութիւնից բանակցել պատկերների համար մայրաքաղաքի կամ արտասահմանի ֆիրմաների հետ: Ահա այդ ցուցակը. 1) Правда и въ огнѣ не горитъ и въ водѣ не тонетъ, 2) Золушка, 3) Спящая царевна, 4) Бѣлоснѣжка, 5) Гулливеръ у Лилипутовъ, 6) Гуливеръ у Великановъ, 7) Красная шапочка, 8) Бѣгъ взапуски, 9) Оберонъ, 10) Храбрый портнишка.

Բացի բոլոր վերոյիշեալ գրքերից Խմբագրական Մասնաժողովը որոշեց տպագրել Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկանները» երկրորդ հրատարակութեամբ՝ առաջինի սպառուած լինելու պատճառով:

Խմբագրական Մասնաժողովը հարկ համարեց փոփոխութեան ենթարկել մինչև այժմ ընդունուած նօրման թարգմանութիւնների վարձատրութեան վերաբերմամբ: Ի նկատ առնելով, որ մեծ տարբերութիւն կայ ինքնուրոյն և թարգմանական աշխատանքի մէջ, որին պէտք է համապատասխանի և դոցա գնահատութեան չափը, և աչքի առաջ ունենալով, որ ընկերութեան միջոցները թոյլ չեն տալիս բարձրացնել ինքնուրոյն գրուածքների համար ընդունուած վարձատրութեան նօրման՝ Խմբագրական Մասնաժողովը որոշեց՝ այսուհետև թարգմանութիւնների համար տալ տպագրական թերթին վարձատրութիւն 12—15 ր. փոխանակ նախկին նօրմայի, այն է 15—20: Ինքնուրոյն գրուածքների վարձատրութիւնը մնում է միևնոյնը, այսինքն 20—25 ր. Մասնաժողովը իրեն վերապահում է իրաւունք բացառիկ դէպքերում աւելի վարձատրու-

թիւն նշանակել։ Այս որոշումը ժամանակին յայտարարուեց լրագրներում։

Խմբագրական Մասնաժողովը՝ կամենալով հրատարակած գրքերում միօրինակ ուղղագրութիւն պահպանել՝ որոշեց առաջարկել Վարչութեանը ունենալ մի մշտական սրբագրիչ։ Գրքերի լեզուն ուղղելու գործը՝ թեթև աշխատանք պահանջող դէպքերում թողնել զեկուցողների և սրբագրիչի վերայ, իսկ այն դէպքերում, երբ գրուածքը պահանջում է աւելի լուրջ խմբագրական աշխատանք՝ Մասնաժողովը ամեն անգամ առանձին որոշում է կայացնում, թէ ում յանձնել։ Վարձատրութիւնը այս դէպքում լինում է ի հաշիւ հեղինակի կամ թարգմանչի։

Առանձին կարևորութիւն տալով եւրոպական կլասիկների թարգմանաբար հրատարակութեանը և աչքի առաջ ունենալով Յովհաննէս խան Մասեհեանի արժանաւորութիւնները իբրև թարգմանչի, բացի դրանից տեղեկանալով, որ նա ունի թարգմանած Շէկսպիրից մի քանի այլ դրամաներ, Մասնաժողովը մասնաւոր կերպով դիմեց Յովհաննէս խան Մասեհեանին խնդրելով, որ նա ուղարկի դոցա հետզհետէ, որպէս զի ընկերութիւնը կարողանայ նոցանից լաւագոյնները հրատարակել։

Խմբագրական Մասնաժողովը հարկ համարեց բաժանել ընկերութեան հրատարակութիւնները կատեգօրիաների՝ բովանդակութեան համեմատ։ Այս կերպ կազմուած ցուցակը հրատարակուեց առանձին յայտարարութեան մէջ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI 1922
Эривань, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

---

# ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ 1895 ԹՒԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

## ԱՇԽԱՏԱՒՈՐ ԱՆԴԱՄՆԵՐ

| | |
|---|---|
| Ագուլիս | 1 Դուլթեան Աւետիս |
| Ագա | 2 Տէր-Յակովբեան Յակ. քահ. |
| Ալեքսանդրապօլ | 3 Տէր Պօղոսեան օր. Սանդուխտ |
| Ախալցխա | 4 Այվազեան Աղեքսանդր |
| Ախալքալաք | 5 Սառւանեան Զարմայր |
| Աղստաֆա | 6 Առաքելեան Արամ |
| | 7 Մամիկոնեան Աղեքսանդր |
| Արմեանսկիյ-Բազար | 8 Դուլթեան Յովհաննէս |
| Բագու | 9 Բաղիրեան օր. Եղիսաբէթ |
| | 10 Զալեան բժ. Միքայէլ |
| | 11 Հախումեան օր. Մարիամ |
| | 12 Ղուկասեան օր. Մարիամ |
| | 13 Վաչեան Աստուածատուր |
| Բաթում | 14 Սուքոյեան Պետրոս |
| Գանձակ | 15 Նաբաթեան Մարտիրոս |
| Գեչրլու | 16 Սաւրիկեան Յակովբ |
| Գօրիս | 17 Մելիք-Փարսադանեան Նայի |
| Դերբենդ | 18 Ղազարեան Կոնստանդին |
| Եկատերինօդար | 19 Տապովալեան Արամ |
| Երեւան | 20 Ամիրխանեան Լեոն |
| | 21 Հախումեան Սիմէօն |
| Թէօդոսիա | 22 Քոնանեան Յակովբ |
| Թիֆլիս | 23 Լիսիցեան Ստեփան |
| | 24 Խուդավերդեան Աղեքսանդր |
| | 25 Մովսիսեան Մարգար |
| | 26 Յարութիւնեան Սամսոն |
| | 27 Շահումեան Գէորգ |
| | 28 Սամարչեան Նիկողայոս |
| Կարս | 29 Յովսէփեան Աստուածատուր |
| Կոկանդ | 30 Բէգլարեան Աշոտ |
| Հին-Նախիջեւան | 31 Ղլթչեան Արսէն վարդապ. |
| Ղզլար | 32 Գիւլնազարեան Կոնստանդին |
| Մեղրի | 33 Վաչեան Աւետիս |

| | |
|---|---|
| Մոսկվա | 34 Միանսարեան օր. Մարիամ |
| | 35 Մուսինեան Յովհաննէս |
| | 36 Սարգսեան Լեւոն |
| Նուխի | 37 Մակեդօնեան օր. Հեղինէ |
| Շամախի | 38 Սարգիսբէգեան Սմբատ |
| Շուշի | 39 Բահաթրեան Լեւոն |
| | 40 Իւզբաշեան Մովսէս |
| Պետերբուրգ | 41 Ջաւրեան Յովհաննէս |
| Ռէշտ | 42 Յովսէփեան Աղէքսանդր |
| Վաղարշապատ | 43 Օհանջանեան Աւետիս |
| Վարշաւա | 44 Եարղուլեան Թովմաս |
| Վլադիկավկազ | 45 Տէր-Յովհաննիսեան Ա. |
| Օդեսսա | 46 Մուրադեան Միքայէլ |

## ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

*(Հիմնարկութեան օրից)*

1 Ադամեան Յովհաննէս
2 Ալիբէգեան տիկ. Նունէ
3 Ալիբէգեան Պետրոս
4 Առաֆելեան տ. Սօֆիա
5 Արամեան Միքայէլ
6 Եարալեան Գրիգոր
7 Թամամշեան Միքայէլ
8 Ժամհարեան Իսահակ
9 Լալայեան Աղէքսանդր
10 Խանդամիրեան Գրիգոր
11 Ծովեանեան Իսահակ
12 Հախումեան Միքայէլ
13 Ղուկասեան Աւետիք
14 Ղուկասեան տիկ. Եւգինէ
15 Մանուէլեան Ստեփան
16 Մելիք-Ազարեան Աղէք.
17 Միլեան Արշակ
18 Շահազիզ Սմբատ
19 Սալթիկեան
20 Սվէշնիկեան Լազար
21 Տէր-Աստուածատրեան Գ.
22 Տէր-Խաչատրեան Եղիա

## ԻՍԿԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

*Թիֆլիս*

1 Աթաբէգեան Ներսէս
2 Ալիխանեան Յովհաննէս
3 Աղամալեան բժ. Եփրեմ
4 Ամիրաղեան Բագրատ
5 Ամիրխանեան Յովսէփ
6 Անանեան Աղէքսանդր
7 Անանեան Յովհաննէս
8 Առաքելեան Համբարձում
9 Ասիլեան Միսաք
10 Ասլամազեան Աղէքսանդր
11 Արծրունի բժ. Վահան



12 Աւագեան Բէգլար
13 Աւագեան Վահան
14 Աղանեան Գիւտ. քահ.
15 Բաբայեան բժ. Աւետիք
16 Բալաղեան Սամուէլ
17 Բարխուդարեան Արշակ
18 Բէգնազարեան Արշակ
19 Բէնքլեան Արշակ
20 Գալստեան Գալուստ
21 Դանիէլեան Բէգլար
22 Դաւթեան Եգոր
23 Դաւթեան Լեւոն
24 Դոլուխանեան Բօղդան
25 Դոլուխանեան Մարկոս
26 Դոլուխանեան Պօղոս
27 Դովլաթբէգեան Յարութ.
28 Եարղուլեան Մինաս
29 Երզնկեան Գրիգոր
30 Ջաւարեան Սիմէօն
31 Թադէոսեան Արշակ
32 Թառայեան Աւետիք
33 Թառայեան Մակար
34 Թումանեան իշխ. տ. Մար.
35 Թումանեան Յովհաննէս
36 Թումեան Յովհաննէս
37 Թումեան Ստեփան
38 Լիսինեան Արտեմ
39 Լիսիցեան Սահակ
40 Լիսիցեան Ստեփան
41 Լունկևիչ Վալերեան
42 Խանդամիրեան Գրիգոր
43 Խանդամիրեան օր. Եղիս.
44 Խաչատրեան Խաչատուր
45 Խատիսեան օր. Նունէ
46 Խարազեան տ. Մարիամ
47 Խուդավերդեան Աղէք.
48 Խօջամիրեան Գերասիմ
49 Ծատուրեան Եփրեմ
50 Ծովեանեան Կոնստանդին
51 Ծովեանեան Պետրոս
52 Ծուրինեան Սողոմոն
53 Կանդուրալեան Պօղոս
54 Կարապետեան բժ. Աղէք.
55 Հախումեան Աստուածատ.
56 Հասրաթեան Սողոմոն
57 Ղազարեան Գէորգ
58 Ղազարեան Նազար
59 Ղալումեան Ստեփան
60 Ղոնդաղսազեան Արշակ
61 Ղուլեան Մամիկոն
62 Մալայեան Յովհաննէս
63 Մալխասեան Ստեփան
64 Մալումեան Խաչատուր
65 Մառանջեան Սմբատ
66 Մարգարեան Բագրատ
67 Մարկոսեան Յովսէփ
68 Մարտիրոսեան Յովհան.
69 Մեասնիկեան Գրիգոր
70 Մելեան Մեսրոպ քահ.
71 Մելիք-Ազարեան Աղէք.
72 Մելիք-Ղարագեօզեան Գ.
73 Մելքումեան Ա.Թ.
74 Միրաղեան Գեդէօն
75 Միլեան տիկ. Վառվառէ
76 Միրզօյեան Գաբրիէլ
77 Մկրտչեան Աստուածատ.
78 Մկրտչեան Աստուածատ.
79 Մովսիսեան Եղիա
80 Մովսիսեան Մարգար
81 Յակովբեան օր. Վարդուհի
82 Յարութիւնեան Սամսօն
83 Նազարեան Վարշամ
84 Նազարեան Տիգրան
85 Նաւասարդեան բժ. Բագ.

86 Շահբազեան Վահան
87 Շահլամեան Դաւիթ
88 Շահնազարեան օր. Սօֆ.
89 Շահումեան Գէորգ
90 Շայիկեան Աղէքսանդր
91 Շոլկովնիկեան տ. Վառվ.
92 Պետրոսեան Պետրոս
93 Պռօշեան Պերճ
94 Ռոտինեան Աղէքսանդր
95 Ռոտինեան Տիգրան
96 Սահակեան օր. Դարիա
97 Սահակեան Վարդան
98 Սամարչեան Նիկողայոս
99 Սարուխանեան Առաքել
100 Սարաֆ-Գուրգէնեան Բագ.
101 Սաքոյեան Կարապետ
102 Սողալեան օր. Նունէ
103 Սուրէնեան Գէորգ արք.
104 Սպենդիարեան Յովհան.
105 Ստեփանեան Գրիգոր
106 Ստեփանեան բժ. Կար.
107 Ստեփանեան Յովհաննէս
108 Վարդանեան Գրիգոր
109 Վարդապետեան Աւետիք
110 Տէր-Աբրահամեան Մկր.
111 Տէր-Աստուածատրեան Ա..
112 Տէր-Գրիգորեան Արշակ
113 Տէր-Գրիգորեան Յակոբ
114 Տէր-Նիկողոսեան Գրիգոր
115 Տէր-Ոսկանեան Սմբատ
116 Տէր-Պետրոսեան Գրիգոր
117 Տէր-Սարգսեան Յովհան.
118 Տէրտէրեան Արտաշէս
119 Տիգրանեան Նազարէթ
120 Տիգրանեան տ. Նատալիա
121 Քալանթար Աղէքսանդր
122 Քօչարեան Յակոբ
123 Օհանջանեան տիկ.

*Ազուլիս*

124 Գէորգեան տիկ. Հեղինէ

*Ախալցխա*

125 Այվազեան Աղէքսանդր
126 Բախալօօշեան օր. Հայկ
127 Բէօրէքչեան Աբրահամ
128 Բուդուղեան Գրիգոր
129 Հիւրմիւզեան Վարոս
130 ՄարուքեանԿարապետ
131 Սայեանեան Պօղոս

*Ախալքալաք*

132 Առուանեան Զարմայր
133 Գրիգորեան Արշակ
134 Խաչատրեան Խաչատուր
135 Ղուկասեան Լեոն
136 Մաղաքեան Կարապետ
137 Մառանջեան Սեդրակ
138 Մեռկելեան Յովհաննէս
139 Յարութիւնեան Սարգիս
140 Պաստուրմաճեան Եղիշէ
141 Տէր-Գրիգորեան Զալալ

*Ալէքսանդրապօլ*

142 Բեժանեան Միքայէլ
143 Կոստանեան Յովհաննէս

*Աղստաֆա*

144 Առաքելեան Արամ
145 Գալստեան Սահակ
146 Իսավերդեան Աղէքսան.
147 Մամիկոնեան Աղէքսան.
148 Վաչեան Սմբատ

*Արմաւիր*

149 Խառայեան օր. Հռիփսիմէ



150 Կիրակոսեան Յովհաննէս
151 Նազարեան Խրիստափոր
152 Նազարեան Պօղոս
153 Զուգայեան Գէորգ
154 Սեֆերեան Գէորգ քահ.
155 Տէր-Աւետիքեան Ենովք
156 Տէր-Յովակիմեան Հայրապ.
157 Օհանեան Առաքել
158 Օրդուխանեան Սիմէօն

*Արմեանսկի-Բազար*

159 Ալթնթօփեան տիկ. Եւա
160 Բախալեան Գէորգ
161 Բախալեան տիկ. Եղիս.
162 Դաւթեան Յովհաննէս
163 Մազլումեան Գաբրիէլ
164 Զաբլիկեան տիկ. Աննա

*Բագու*

165 Ագամեան Յարութիւն
166 Այվազեան Նիկողայոս
167 Այվազեան Ստեփան
168 Ասլանեան Սամուէլ
169 Ասրիբէգեան Աղէքսանդր
170 Բաբայեան Յովհաննէս
171 Բաղիրեան օր. Եղիսաբէթ
172 Բէգլարեան Բէգլար
173 Բէգլարեան տիկ. Վարդ.
174 Բուդաղեան Արսէն
175 Բուդաղեան Տիգրան
176 Գեանջէցեան Հայկ
177 Դաստակեան Աբրահամ
178 Եղիազարեան Աղէքսանդր
179 Զալեան բժ. Միքայէլ
180 Զօհրաբեան Պետրոս
181 Թադոսեան Նիկողայոս
182 Թառայեան Սահակ
183 Թումայեան Արշակ
184 Թումայեան Ղազարոս
185 Թումայեան Ղ.
186 Ժամկոչեան Վաղարշակ
187 Խալաֆեան Խաչատուր
188 Խանդամիրեան Տիգրան
189 Խաչատրեան բժ. Խրիստ.
190 Կրասիլնիկեան Կոնստան.
191 Կրասիլնիկեան տ. Վիկտ.
192 Կրասիլնիկեան Տիգրան
193 Կօրմանեան Աստուածատ.
194 Կօյմանեան Աւագջան
195 Հախումեան օր. Մարիամ
196 Հովիւեան Սիմէօն
197 Ղուլեան Լեոն
198 Ղուկասեան օր. Մարիամ
199 Մագաթեան տ. Աննման
200 Մագաթեան Յակոբ
201 Մանուէլեան Միքայէլ
202 Մարգարեան Պատուական
203 Մելիքեան Համբարձում
204 Մութաֆեան Վահրամ
205 Յակոբեան Ասլան
206 Յարութիւնեան Դաւիթ
207 Յարութիւնեան տ. Մարգ.
208 Յովհաննիսեան տ. Սաթ.
209 Նազարեան Աղէքսանդր
210 Նազարէթեան Արամ
211 Շխեան Բագրատ
212 Շխեան Բագրատ
213 Պատուականեան տ. Նատ.
214 Պօղոսեան Կոնստանդին
215 Սարգսեան Բաղդասար
216 Սարգսեան տիկ. Նունէ
217 Վաչեան Աստուածատուր
218 Տէր-Անդրէասեան Մխիթ.
219 Տէր-Գրիգորեան Անտօն

220 Տէր-Մարգարեան Գասպ.
221 Քալանթար Գրիգոր
222 Քօչարեան Հայրապետ
223 Օհանեան Միսաք

*Բաթում*

224 Ակինեան Ստեփան
225 Շաթրեան Աղէքսանդր
226 Սուքոյեան Պետրոս
227 Տէր-Ստեփանեան Գաբր.

*Բէլգրադ*

228 Սմիրնովա տիկ. Մարիամ

*Գանձակ*

229 Մամիկոնեան Նիկողայոս
230 Նաքաթեան Մարտիրոս

*Դէնիզլու*

231 Գնունի Յակովբ
232 Թաղիանոսեան Աղէքսան.
233 Մել.-Ղազարեան Թադ. ք.
234 Սարգսեան Սմբատ
235 Օհանջանեան Ռուբէն

*Գօրիս*

236 Եօլեան Աստուածատուր
237 Թումանեան իշխ. Գէորգ
238 Ղուկասեան Յովհաննէս
239 Մել.-Փարսադ. Բախշի բէգ
240 Մելքումեան Հայրապետ
241 Շահնազարեան Արսէն
242 Պօղոսեան Եփրեմ
243 Սարգսեան Մկրտիչ
244 Տէր-Ղազարեան Համբար.

*Դէրբէնդ*

245 Ապրեսեան Յարութիւն
246 Բաղդասարեան Յովսէփ
247 Ղազարեան Կոնստանդին
248 Միրզօյեան Յովակիմ
249 Յովակիմեան տ. Մարիամ
250 Յովհաննիսեան օր. Եղիս.
251 Յովհաննիսեան օր. Եւա
252 Պապօվեան Մակար
253 Ստեփանեան Աղէքսանդր

*Եկատերինօդար*

254 Բախչիսարայեան Գրիգոր
255 Ջաքարեան Գէորգ քահ.
256 Լուսիկեան Սեդրակ
257 Լուսիկեան տ. Տիրուհի
258 Խարակիլեան Սարգիս
259 Խուճիկեան Ներոն
260 Կարայեան Մկրտիչ
261 Կարինեան Յովսէփ
262 Մամիկոնեան Աւետիք
263 Մելիք-Դաւթեան Յովհ.
264 Նազարեան Մինայ
265 Շապօշնիկեան Եղիա
266 Շապօվալեան Արամ
267 Շապօվալեան Միքայէլ
268 Շատուրեան Աստուածատ.
269 Ջերազեան Բաղդասար
270 Ջոլախեան Յարութիւն
271 Պաղարսուքեան Գէորգ
272 Պապօվեան Գէորգ
273 Սապանճեան Մինաս
274 Տէր-Խաչատրեան Արշակ
275 Տէր-Մինասեան Մինաս
276 Քաբիկեան Ադամ

*Երեւան*

277 Ահարոնեան Գեդէօն
278 Ամիրեան Գէորգ
279 Անանեան Միքայէլ



280 Ափրիկեան Խաչատուր
281 Գասպարեան Գէորգ
282 Ղորղանեան Յովհաննէս
283 Մելիքեան Մկրտիչ
284 Մուսինեան տիկ. Աշխէն
285 Ջանփօլադեան Սամսոն
286 Տէր-Մկրտչեան տ. Հռիփս.
287 Տէր-Յովհաննիսեան տ. Ե.
288 Տէր-Օհանեան օր.
289 Տիգրանեան Լեւոն
290 Քալանթարեան տ. Սօֆիա

*Թէոդոսիա*

291 Քանանեան Յակովբ
292 Քէֆչեանց Յակովբ

*Ժընեւ*

293 Ամբրումեան օր. Մար.

*Խանքենդի*

294 Դաւթեան Սամսոն

*Կաղզուան*

295 Ջանփօլադեան Սմբատ

*Կարս*

296 Ամիրեան Խաչատուր
297 Ապրեսեան Աբէլ
298 Բաղդասարեան Սարգիս
299 Խօջաէյնաթեան Արշակ
300 Ղազարեան Ղազար
301 Յովսէփեան Աստուած.
302 Շէկ-Յովսէփեան Թադէոս
303 Տէր-Յակովբեան Սմբատ

*Կզնութ կամ Գզնութ*

304 Ամիրզարեան Սահակ
305 Տ.-Մաթէոսեան Խորէն ք.

*Կոկանդ*

306 Բէգլարեան Աշոտ
307 Քօչարեան Բէգլար

*Հաշտարխան*

308 Մելիքեան տ. Սիրանոյշ
309 Ստեփանէ Խորէն եպիս.

*Հաչամէթ*

310 Յովհաննիսեան Սարգիս
311 Պապօվեան Կոնստանդին
312 Սերեբրեակեան Աղէք.
313 Ստեփանեան Լեւոն

*Հառիճոյ վանք*

314 Տէր-Պօղոսեան Մարտ. ք.

*Հին-Ղրիմ*

315 Օհանեան Անտօն

*Ղազախ*

316 Աղասարեան բժ. Աստ.
317 Մինասեան տ. Նախշուն

*Ղզլար*

318 Ալէքսանեան Մելքոն
319 Աղաբալեան Կարապետ
320 Աղաջանեան Գրիգոր
321 Անանեան Կարապետ
322 Անանեան տիկ. Նունէ
323 Գասպարեան Մկրտիչ
324 Գորգեան Բարսեղ
325 Դիլանեան Բարսեղ
326 Եազօրեան Յովհաննէս
327 Եղիգարեան Յովհաննէս

328 Երուսաղէմեան տիկ. Եւա
329 Թուշմալեան Ստեփաննոս
330 Ղայթմազեան օր. Շուշ.
331 Ղորղանեան Խորէն քահ.
332 Ղուլիջանեան Յարութ.
333 Մաժինեան տ. Շողակաթ
334 Մահտեսեան Յովհաննէս
335 Մանուկեան Վարդան
336 Մելքումեան Յարութիւն
337 Մեսրոպեան Կարապետ
338 Միշվէլեան տիկ. Նունէ
339 Միրզեան Սարգիս
340 Մկրտումեան Գէորգ քահ.
341 Մոլտանեան Մկրտիչ
342 Մողնեան Ադամ
343 Մուրադբէգեան Աղէքս.
344 Յարութիւնեան Յովհան.
345 Սողոմոնեան Ստեփաննոս
346 Սվէչնիկեան Մինաս
347 Քալանթարեան Ոսկան
348 Ֆիլիեան Գէորգ

*Մեղրի*

349 Վաչեան տիկ. Կատարինէ

*Մօզդօկ*

350 Թուշմալեան Միքայէլ

*Մօսկվա*

351 Աւետիսեան Բարսեղ
352 Բունեաթեան Բունեաթ
353 Եղիգարեան Սիմէօն
354 Լազարեան Մինաս
355 Մանուէլեան Աւետիս
356 Մխոնսարեան օր. Մար.
357 Մուսինեան Յովհաննէս
358 Մուրադեան բժ. Մինաս
359 Ներսէսեան Աւետիք
360 Պօղոսեան Աւետիս
361 Վլասեան Գրիգոր
362 Տէր-Զանեան Մկրտիչ
363 Քանանեան Գէորգ
364 Քանանեան տիկ. Վառվ.

*Նիժնիյ-Նօվգօրօդ*

365 Տէր-Զաքարեան Մեսրոպ

*Նոր-Բայազէթ*

366 Բունուզեան Աւետիս

*Նօվայա-Ալէքսանդրիա*

367 Հախումեան Աբրահամ

*Նօվօռօսսիյսկ*

368 Պետրոսեան Միքայէլ
369 Ջանումեան
370 Սարուխանբէգեան Վաղ.
371 Սուրաբէգեան Յովսէփ

*Շամախի*

372 Գէնջէցեան Սահակ
373 Միրզօյեան Ստեփան
374 Պապօվեան Արշակ
375 Տէր-Սարգսեան Բալաբէգ

*Շխմահմուղ*

376 Սահակեան Մկրտիչ ա. ք.

*Շուշի*

377 Աթաբէգեան Ասլան
378 Աթաջանեան Սաւադ
379 Աղախանեան Խուրշուդ
380 Բաբայեան Արտաշէս
381 Բահաթրեան Լեւոն



382 Բահաթրեան բժ. Խաչ.
383 Գիւրջեան Գրիգոր
384 Թորոսեան Գրիգոր
385 Ժամհարեան Մարգար
386 Իւզբաշեան Մովսէս
387 Իւզբաշեան Ստեփան բէգ
388 Լալայեան Երուանդ
389 Խունունց Մնացական
390 Հասան-Ջալալեան Պօղոս
391 Ղալամեան Հայրապետ
392 Մադաթեան Եղիշէ
393 Միհրեան Թովմաս
394 Նիկողոսեան Վահան
395 Նուրիջանեան
396 Շահիջանեան Աղէքսան.
397 Սարուխանեան Աւագ
398 Տէր-Միքայէլեան Արշակ
399 Տէր-Սարգսեան Միրզա
400 Օհանեան Արշակ

*Պետերբուրգ*

401 Զաքարեան բժ. Թադէոս
402 Մարր Ն. պրօֆեսսօր

*Վաղարշապատ*

403 Յովսէփեան Հայրապետ
404 Օհանջանեան Աւետիս

*Վարշաւա*

405 Եարդուլեան Թովմաս
406 Մխիթարեան Յովհաննէս

*Վլադիկավկազ*

407 Տէր-Յովհաննիսեան Ա.

*Ցղնա*

408 Մովսիսեան Գրիգոր
409 Սաղաթէլեան Սաղաթէլ
410 Սարգսեան Դաւիթ

*Քութայիս*

411 Աստուածատրեան Միք.
412 Յարութիւնեան Սերովբէ

*Օդեսսա*

413 Աբրահամեան Յակոբ
414 Աստուածատրեան Մկրտիչ
415 Արղութեան իշխ Բ.
416 Աւագեան Նիկիտա
417 Զօհրաբեան Եզօր
418 Մել.-Բաբաջանեան Լեւոն
419 Մուրադեան Միքայէլ
420 Տէր-Միքայէլեան Տ.

## ՆԱԽԱՀԱՇԻՒ 1896 ԹՈՒԻ ՀԱՄԱՐ

### ՄՈՒՏՔ

| | | | |
|---|---|---|---|
| Մնացորդ առ 1-ն յուն. 1896 թ. . . . | 250 | ր. 42 | կ. |
| Անդամավճարներից . . . . . . . . . . | 2600 | » — | » |
| Գրքերի վաճառումից . . . . . . . . . . | 2400 | » — | » |
| Երեկոյթներից . . . . . . . . . . . . | 800 | » — | » |
| Նուէրներից . . . . . . . . . . . . . | 200 | » — | » |
| Ընդամենը | 6250 | ր. 42 | կ. *) |

### ԾԱԽՔ

| | | | |
|---|---|---|---|
| Գոյքի ապահովութեան . . . . . . . . . | 81 | ր. 30 | կ. |
| Գրասենեակին . . . . . . . . . . . . | 300 | » — | » |
| Գրասենեակի ծառայողներին . . . . . . | 600 | » — | » |
| Փոստի և այլ դիւանական ծախքեր . . | 800 | » — | » |
| Գրքերի տպագրութեան համար . . . | 4469 | » 12 | » |
| Ընդամենը | 6250 | ր. 42 | կ. |

*) Մուտքը աւելացած դէպքում՝ ծախսւում է գրքերի տպագրութեան համար։

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ

(17 մարտի 1896)

1, 1895 թուի ապրիլի 30-ի Ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը։

2, Վարչութեան և Խմբագրական Մասնաժողովի գործունէութեան տեղեկագրի ընթերցումը։

3, 1895 թուի դրամական հաշուի ընթերցումը։

4, 1896 թուի համար կազմած նախահաշուի քննութիւնը և հաստատութիւնը։

5, Պաշտօնատար անձերի ընտրութիւնը.

Ա. Վարչութեան [1]) Մի անդամի
Գանձապահի
Քարտուղարի

Բ. Խմբագրական Մասնաժողովի [2]) վեց անդամի

---

[1]) Վարչութիւնից դուրս են գալիս Խ. Խաչատրեան, Ա. Տէր-Գրիգորեան և Յ. Ամիրխանեան։

[2]) Խմբ. Մասնաժողովից դուրս են գալիս Հ. Առաքելեան, Յ. Քօչարեան, Գ. Միրզօյեան, Ա. Բարխուդարեան, Ս. Բալաղեան և Յ. Գիւլնազարեան։

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0083205